**09/2250Հ**
**19.01.2018թ.**

**«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի**
**ՆԱԽԱԳԱՀ՝ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ**

/ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ/

**Հարգելի տիկին Դոյդոյան**

Ի պատասխան Ձեր 12.01.2018 թվականի հ.325-ի8 գրությամբ ներկայացված տեղեկատվություն ստանալու հարցմանը տեղեկացնում ենք հետևյալը.

հարցման 1-ին կետի հետկապված տեղեկացնում ենք, որ Ամանորի շնորհավորական բացիկների համար համայնքային բյուջեից միջոցներ չեն ծախսվել.

հարցման 2-րդ կետի մասով տեղեկացնում ենք, որ սոցիալապես անապահով անձանց Ամանորի կապակցությամբ տրամադրվել են սոցիալական փաթեթներ՝ թվով 21738 հատ, 1 փաթեթի արժեքը 4134 դրամ, ինչպես նաև Երևանի մանկապարտեզների թվով 40422 երեխայի համար նախատեսված նվեր-փաթեթներ (քաղցրավենիք)՝ մեկ փաթեթի արժեքը 1100 դրամ.

հարցման 3-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանում ամանորյա պաշտոնական ընդունելության կազմակերպման համար «Արիես քեյթրինգ սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր՝ 5.0 մլն դրամի չափով:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ**
**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ** **Վ. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ**

Ա. Հարությունյան
011-51-41-43